Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Հաղթանակի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Վերապատրաստող - մենթոր՝ Մայրանուշ Մկրտումյան

Ուսուցիչ՝ Մարո Օհանջանյան

Երևան 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում որպես կրթության բովանդակային բաղադրիչ; Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետզ է տա դպրոցը; <<Արժեհամակարգ>> ասվածը շատ լայն հասկացություն է, դրա մեջ պետք է ներառված լինեն մի շարք հատկանիշներ։ Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր , իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար։ Արժեհամակարգը լիակատար է բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորումը իրենից ներկայացնում է դժվարին, տևական, համբերատար աշխատանք։ Հետազոտական աշխատանքի նպատակը տարբեր հնարների, մեթոդների համադրմամբ ու կիրառմամբ սովորողների արժեհամակարգի, կարողունակությունների ձևավորումն է վերլուծական, քննադատական մտքի զարգացման միջոցով; Այսօր պահանջված են ուրույն մտածողություն ունեցող, ստեղծագործ, վառ երևակայությամբ օժտված անձիք, ովքեր դժվարին իրավիճակում փորձում են գտնել հնարավորություններ, ունեն ինքնազարգացման և առաջընթացի մեծ ձգտում; Ստեղծագործական կարողությունները բնորոշ են ցանկացած անհատի: Դպրոցահասակ երեխաները պետք է ոչ միայն տիրապետեն դպրոցական ծրագրային նյութին, այլև կարողանան այն ստեղծագործաբար կիրառել։ Իսկ դա հնարավոր է միայն մանկավարժական նպատակային գործունեության արդյունքում։Սովորողի արժեհամակարգի ձևավորումը ակնհայտ է լինում շատ տարիներ հետո։Այս աշխատանքում պետք է ունենալ նվիրում, մեծագույն համբերություն, համառ ջանքեր և ցանկալի արդյունքը չի ուշանա։Առօրյա կյանքում կարելի է հանդիպել այնպիսի պահերի, երբ կրթված

մարդու մոտ բացակայում է դաստիարակվածությունը: Աշակերտը կարող է հաջողությամբ լուծել մաթեմատիկական բարդ խնդիրներ, յուրացնել համապատասխան գիտելիքներ քիմիայից, ֆիզիկայից, բայց եսասիրության հակումներ դրսևորի, չպահպանի տարրական համակեցության կանոնները:Լինում են նաև դեպքեր, երբ բարոյական բոլոր կողմերով օրինակելի մարդը գիտելիքների պակասի պատճառով չի կարողանում իր տեղը գտնել կյանքում: Ի՞նչ անել, ինչու՞ և ինչպե՞ս, և ինչպիսի՞ դերակատարում պետք է ունենա դպրոցը, ուսուցիչը , որպեսզի արժեքների համակարգը ճիշտ ձևավորվի և դպրոցն ավարտելուց հետո կյանք մտած անհատը կարողանա իր տեղը իսկապես գտնել կյանքում:

Դելորի կրթության 4 հիմնասյուները

1. Սովորել իմանալու համար
2. Սովորել կիրառելու համար
3. Սովորել լինելու համար
4. Սովորել համակեցման համար

Ուսուցիչը մեկ դասաժամի ընթացքում ուսումնական խնդիրներից, ուսումնական նպատակներից բացի պետք է կարևորի նաև դաստիարակչական նպատակը:

Դասին ներկայացվող դաստիարակչական խնդիրները ցանկացած դասի ընթացքում.

- Հաղորդակցական հմտությունների ձևավորում.
- Համագործակցային կարողությունների ձևավորում.
- Միմյանց լսելու, մինմյանց կարծիքը գնահատելու կարողությունների ձևավորում.

- Միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորում.

Այս խնդիրների լուծումը կարելի է կատարել համագործակցային մեթոդների, խմբային մեթոդների, զույգերով աշխատելու միջոցով: Սովորողները սովորում են միմյանց լսել, միմյանց կարծիքը հաշվի առնել, մտքեր ու նյութեր փոխանակել, համագործակցել: Այս պայմաններում յուրաքանչյուր երեխա՝ անկախ իր կամքից, փորձում է երևալ ամենալավը; Նման աշխատանքների ժամանակ սովորողի ու սովորեցնողի միջև անկաշկանդ հաղորդակցման պայմաններ են ստեղծվում, խթանվում է խմբի ինքնակառավարումը, ապահովվում է մտապահում, արագանում են անձի ձևավորման գործընթացները,հարգանք է ձևավորվում նրանց մոտ:Երեխաներին միշտ պետք է հիշեցնել, որ պահպանեն գրադարանային լռություն:

- Տարբեր ժողովուրդների լեզվի, մշակույթի, պատմության հանդեպ հարգալից վերաբերմունքի ձևավորում.
- Ազգային ավանդույթների պահպանման անհրաժեշտության գիտակցում.
- Հայրենիքի պաշտպանության գործում սեփական դերի գիտակցության ձևավորում.

Երեխաներին պետք է խրախուսել, որ նրանք շատ լեզուներ պետք է իմանան, շատ ազգերի մշակույթի պետք է ծանոթ լինեն, բայց անընդհատ խրախուսելով, ոգևորելով երբեք չպետք է մոռանալ, որ մենք ունենք նաև ազգային արժեքներ, ազգային ավանդույթներ, որոնց պահպանումը, մեր ինքնության պահպանումը չափազանց կարևոր է: Երեխաներին շատ լավ սովորեցնելով օտար լեզուները մենք միշտ զուգահեռ պետք է նրանց բերենք այն գիտակցության, որ նախ և առաջ պետք է սովորել մեր մայրենի լեզուն: Երեխաների մեջ ձևավորել հարգանք ազգային ավանդույթների հանդեպ: Այստեղ մեծ դերակատարություն ունի նաև ընտանիքը:

Այստեղ մեծ դերակատարություն ունի նաև ընտանիքը: Յուրաքանչյուր մարդու կյանքում ընտանիքը նրա հաջողությունը պայմանավորողամենակարևոր գործոններից մեկն է: Այսօր դպրոցում ընտանիքի նկատմամբ արժեքային վերաբերմունքի կրթությունը մանկավարժական առաջնահերթ խնդիրներից է: Ընտանեկան արժեքների ձևավորումը սկսվում է վաղ մանկությունից: Ընտանեկան արժեքների ձևավորումը շատ կարևոր և բարդ գործընթաց է, որը երկար ժամանակ մեծ ջանքեր է պահանջում ընտանիքի բոլոր անդամների կողմից: Ժամանակակից դպրոցականների շրջանում ընտանեկան արժեքներ ձևավորելու համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի արժեքներ, որոնք ցանկացած պահի մնում են կարևոր, նշանակալից ընտանիք ստեղծելու, ամրապնդելու և պահպանելու համար: Նման արժեքները ներառում են սեր, հարգանք, առողջություն, ընտանեկան կյանք, ավանդույթներ, սովորույթներ, ծեսեր: Ընտանիքի նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում ոչ միայն ընտանիքը, այլ այն կրթական կազմակերպությունը, որտեղ երեխան սովորում է: ՈՒսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: ՈՒսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Արժեքների բուրգի գագաթին գտնվում է նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը : Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է,որ հարգանք ու պատկառանք է հարուցում։

Ինչպես հասնել նրան, որ հենց դասաժամի ընթացքում երեխաների մոտ վերաբերմունք ձևավորվի դեպի հայրենիքը։ Օրինակ՝ կերպարվեստի դասաժամին ուսուցիչը աշակերտին հանձնարարում է նկարել եռագույն դրոշ, բայց շատ կարևոր է, որնկարելուց առաջ, նախապես հանձնարարել կարդալ դրոշի պատմությունը, իմանալ ինչ է խորհրդանշում յուրաքանչյուր գույնը։ Մենք երեխային բերում ենք այն գիտակցության, որ եռագույն դրոշը մեր պետական խորհրդանիշն է։ Շատ կարևոր է ուսուցչի մոտեցումը։ Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են։ Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում։ Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները։ Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում։

- Գեղագիտական ճաշակի զարգացում։

Երբ մեզ վերադարձնում են գործնական աշխատանքը՝ թերթերը լինեն խնամված, մաքուր։ Եթե մենք թափթփված, անփույթ ձևով ընդունեցինք երեխաների աշխատանքը, ապա կնշանակի, որ մենք չենք կարևորում գեղագիտական ճաշակը։

Ուսուցչի կեցվածքը պետք է ճիշտ լինի, երեխայի աչքը շոյի, նա ուսուցչից պետք է սովորի, որ ամեն ինչը պետք է լինի գեղեցիկ,և աշակերտի մոտ կձևավորվի գեղագիտական ճաշակ։

- Մայրենի լեզվի դերի ու նշանակության գիտակցում։

Խոսքը մտածողության արգասիք է;Որքան զարգացած է մարդու մտածողությունը, այնքան գրագետ է կառուցվում նրա խոսքը, և որքան զարգացած է մարդու խոսքը, այնքան զարգացած է նրա մտածողությունը;

Պետք է ուսուցիչը զգոն լինի, զգույշ լինի, որ երեխաները ճիշտ խոսեն, ճիշտ արտահայտեն իրենց մտքերը,դրա համար առաջին հերթին ուսուցիչն ինքը պետք է անթերի տիրապետի բանավոր խոսքին, ճիշտ արտահայտություններին, առոգանություններին։ Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր անգամ աշակերտներին դաս հարցնելիս ուսուցիչը կարևորի նրանց բանավոր խոսքը։ Աշակերտը պետք է անթերի տիրապետի իր մայրենի լեզվին։

Սեփական արժանիքների, իրավունքների ու պարտականությունների գիտակցում։ Շատ կարևոր է երեխաներին իրազեկել իրենց իրավունքների մասին, որովհետև ցանկացած մարդ պետք է իմանա ինչ իրավունքներ ունի։ Իրավունքների հետ միասին շատ կարևոր է, որ երեխաներին բերենք գիտակցության այն մակարդակին, որ նրանք ունեն նաև պարտականություններ։ Ինչպե՞ս դասաժամի ընթացքում հասնել դրան.

Մենք երեխաներին տալիս ենք հանձնարարություններ և անպայման պետք է հետևողական լինենք, որ այդ հանձնարարությունը կատարվի: Երեխան պետք է գիտակցի, որ պարտավոր է, որ ունի պարտավորություններ: Շատ հաճախ երեխաները կամավորության սկզբունքով են ստանձնում որևէ պաստառի ձևավորում: Եթե մենք այստեղ անուշադրություն դրսևորեցինք կամ պատասխանատու չեղանք, մեր վերահսկողությունը թուլացավ, ապա երեխան չի գիտակցի, որ ինքը ունի պարտականություններ կատարելու և եթե ստանձնել է որևէ աշխատանք, ապա պետք է հետամուտ լինի դրա կատարմանը:

Տրամաբանական կարողությունների խթանում:

Պետք է զարգացնել սովորողների վերլուծական քննադատական մտածողությունը: Պետք է մերժել սովորողների բոլոր այն պատասխանները, որոնք գրքից են վերցված, որոնք երեխաները փորձում են սերտել և անգիր արած ներկայացնել. պետք է հասնել նրան, որ երեխան թեկուզ մեկ նախադասություն, կարճ տեքստ, բայց ինքնուրույն մոտեցմամբ, ինքնուրույն ձևակերպմամբ, ինքնուրույն դատողություններով ներկայացնի: Այստեղ շատ կարևոր է մեր մոտեցումը, որ չսահմանափակենք երեխայի միտքը, չընդհատենք նրան, լսենք նրան, որքան էլ որ համոզված լինենք, որ նա սխալ է պատասխանելու: Պիտի ասել. <<Ոչինչ դու այս անգամ մի փոքր ճիշտ չպատասխանեցիր, հաջորդ անգամ փորձիր ավելի ուշադիր լինել>>: Ամենակարևորը հասնել նրան, որ երեխաները ունենան սեփական կարծիք և կարողանան վերլուծաբար հանդես գալ: Դրա համար շատ կարևոր է, որ դասին նախապատրաստվելիս մենք ճիշտ հարցադրումներն անենք. այնպիսի հարցադրումներ, որոնք ուղղորդող են, որոնք պետք է տանեն երեխաներին դեպի վերլուծություն, դեպի քննադատական մտածողություն:

Այս խնդրի լուծման համար շատ արդյունավետ եղանակ է <<Կանխագուշակումների աղյուսակ>> մեթոդը: Ցանկացած հնար, ցանկացած մեթոդ, որը կստիպի երեխային մտածել, ուրեմն պետք է կիրառել, որպեսզի նրա մոտ զարգանա վերլուծական մտածողություն:

Բնության հանդեպ վերաբերմունքի ձևավորում: Շատ կարևոր է, որ ուսուցիչը նախ ինքը կարողանա նկատել բնության ցանկացած գեղեցիկ դրսևորում, ցանկացած ծաղկած ծառ, այնուհետև երեխաների ուշադրությունը կենտրոնացնել: Օրինակ. մենք մտնում ենք դասասենյակ, իսկ դասասենյակի պատուհանից երևում է բնության գեղեցիկ տեսարան: Պետք է նկատել այդ գեղեցկությունը և երեխաների ուշադրությունը պետք է կենտրոնացնել այդ գեղեցիկ տեսարանի վրա: Մենք արժևորում ենք, լուծում ենք շատ կարևոր խնդիր, որ երեխան ուշադիր լինի բնության հանդեպ, որ նկատի այն գեղեցիկը, այն լավը, որ կա բնության մեջ: Կարող են հանդիպել բնության երևույթներ, օրինակ շատ գեղեցիկ ձյուն է տեղում, բնականաբար երեխաների ուշադրությունը շեղվում է, որքան էլ որ փորձենք կանխել, որ նրանք չնայեն պատուհանից դուրս, միևնույն է գրավիչ է նրանց համար այդ գեղեցիկ երևույթը: Շատ լավ կլինի մեկ րոպե ընդհատենք դասը, երեխաներին ցույց տանք ինչ է կատարվում դրսում, եթե կհամընկնի մեր դասի հետ, կապել դասի հետ, եթե ոչ կարող ենք երեխաների ուշադրությունը հրավիրել, ասել որ շատ գեղեցիկ տեսարան է և արագ անցնել դասին: Եթե երեխային գրավում է ինչ-որ բան, նա անդրադառնալու է դրան, որքան էլ որ մենք սահմանափակենք: Ուրեմն շատ կարևոր է, որ մենք տանք նրան այդ հնարավորությունը և շատ արագ բերենք նրան դեպի դասապրոցես: Այս խնդիրը կարելի է լուծել նաև բնության գրկում՝ դասեր կազմակերպելու միջոցով:

Երեխան իր ճանաչողության գործընթացում հետզհետե բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը, և նրա առջև բացվում են բնության գեղեցկությունները։ Գեղեցիկը նկատելու կարողության ձևավորմանը զուգընթաց հարկավոր է երեխաներին սովորեցնել բնության մեջ ներդաշնակության խորհուրդն ըմբռնելու արվեստը և ձգտում առաջացնել՝ չխաթարելու այն։ Մարդու մեջ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի. և՛ դեմքը, և՛ հագուստը, և՛ հոգին, և՛ մտքերը… Ա.Չեխով

Շրջապատող աշխարհում գեղեցիկը նկատելու և ընկալելու կարողությունը կարևոր նախապայման է՝ մարդու հոգևոր աշխարհի ձևավորման ու զարգացման համար։ Դեռևս մանուկ հասակից գույների և հնչյունների բազմազանության մեջ երեխան բացահայտելով հետազոտում է շրջապատող աշխարհը. նա հրճվում է բնության գունագեղությամբ և իր համար հայտնաբերում գեղեցիկը։

Անհնար է երեխային լիարժեք կրթել ու դաստիարակել առանց նրա մեջ գեղեցիկի զգացողության ձևավորման։ Հենց այդ ընթացքում էլ նրա առջև բացվում են բնության գեղեցկությունները։ Երեխան իր ճանաչողության գործընթացում հետզհետե բացահայտում է դրանք։ Նա զննում է հմայիչ բնապատկերները, արևածագն ու մայրամուտը, աստղալից երկինքը, տարվա տարբեր եղանակների գուներանգները, բուսական ու կենդանական աշխարհի փոփոխությունները և այլն։

Գեղեցիկը նկատելու կարողության ձևավորմանը զուգընթաց հարկավոր է երեխաներին սովորեցնել բնության մեջ ներդաշնակության խորհուրդն ըմբռնելու արվեստը և ձգտում առաջացնել՝ չխաթարելու այն։ Արվեստում, շրջապատող իրականության մեջ գեղեցիկը տեսնելու կարողությունը չափազանց կարևոր դեր ունեն երեխայի հոգևոր կյանքում։

<<Աշուն>> անցնելիս, կազմակերպում եմ դաս՝ բնության գրկում, ինչը մեկ անգամ ևս երեխաներին կապում է բնությանը։

Նրանք աշխուժորեն արձագանքում են գույների գեղեցիկ ներդաշնակությանը, ձգտում ցայտուն, պայծառ ու շքեղ գուներանգներին: Կրտսեր դպրոցականների գեղագիտական ընկալման ձևավորումն ու զարգացումը պահանջում է դաստիարակուրյան տարբեր գործոնների և միջոցների համակցված կիրառում: Բնությունը երեխայի գեղագիտական ճաշակի մեծագույն դաստիարակն է:

Ռուս մեծ կոմպոզիտոր Չայկովսկին, բարձր գնահատելով արվեստի դերը մարդու կյանքում, այնուամենայնիվ, նախապատվությունը տվել էբնությանը: Նա գրել է.<<Բնությունից ստացած զմայլանքն ավելի բարձր է, քան արվեստից ստացածը>>:

Հիրավի, երեխան բնության մի մասնիկն է, և այստեղից է սկսվում նրա աշխարհը: Բնության հետ անմիջապես շփմամբ ձևավորվում են ներդաշնակ ու ստեղծագործ մարդու կերպարը, նրա վարքագիծը; Ուստի ուսուցիչն իր դասերը պետք է կառուցի այնպես, որ կարողանա սաների մեջ արմատավորել համամարդկային այնպիսի արժեքներ, և նրանք նայեն դեպի բարին, ազնիվն ու գեղեցիկը, օգտակարն ու արդյունավետը, անհրաժեշտն ու կարևորը: Աշակերտների գեղագիտական դաստիարակության հնարավորություն են ընձեռում կրտսեր դպրոցում ավանդվող գրեթե բոլոր առարկաները:

Օրինակ՝ դասարանում աճեցնում ենք սենյակային բույսեր, ուշադիր եմ, ժամանակին ջրում եմ, կամ խնդրում եմ երեխաներին, որ իրենք ջրեն: Երեխաներին վերաբերմունք եմ սովորեցնում բնության նկատմամբ իմ իսկ օրինակով: Դիտելով բնությունը՝ երեխան բազում թելերով կապվում է շրջակա աշխարհին և սիրում այն;Հենց այդ սերն էլ նրա մեջ ծնում է բնությունը պահպանելու ցանկություն:

Առողջ ապրելակերպի, անձնական հիգիենայի, սեփական առողջության նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ձևավորում:

Առողջ մարդը բնության ամենաթանկ ստեղծագործությունն է։ Թ. Կարլայլ
Առողջությունը թանկ է ոսկուց։ Վ. Շեքսպիր
Երեխաների կենսունակությունը և աշխուժությունը ապահովում է նաև նրանց հոգեկան կյանքը, աշխարհայացքը, մտավոր զարգացումը, գիտելիքների ամրությունը և հավատը սեփական ուժերի նկատմամբ; Նպատակահարմար եմ գտնում մեջ բերել մեծ մտածող Ի. Պ. Պավլովի խոսքը. <<Մարդը երկրային բնության բարձրագույն արգասիքն է; Իսկ բնության գանձերը վայելելու համար նա պետք է լինի առողջ, ուժեղ և խելացի>>։ Երեխաների մեջ ձևավորել առողջ ապրելակերպի կարողություններ և հմտություններ։Անհրաժեշտ է ավելացնել երեխաների շարժողական ակտիվությունը; Այդ խնդրի լուծման համար կարևոր է.Առավոտյան լիցքային վարժությունների անցկացումը. այն կնպաստի երեխաների տրամադրության բարձրացմանը, ինչպես նաև ուսումնական պրոցեսի հաջող սկսվելուն։ Պետք է առավոտյան շուտ արթնանալ, մարզվել, պետք է ընդունել առողջ սնունդ։

Ժամանակակից տեխնիկական միջոցների տիրապետման անհրաժեշտության գիտակցում, առօրյայում կիրառելու հմտությունների ձևավորում։ Այսօր ժամանակակից տեխնիկական միջոցները շատ լայն ձևով մտել են մեր առօրյա կյանք, երեխաների մոտ առավել ևս։ Ինչպե՞ս անել, որ այդ ամենը ճիշտ օգտագործել, նպատակային օգտագործել։ Նույն հեռախոսը, որ խանգարում է աշակերտին դասի ժամանակ, օգնի նրան։ Բնականաբար երեխաներին կարելի է առաջադրել գործնական աշխատանքները ներկայացնել հենց իրենց տիրապետած տեխնիկական միջոցներով։ Երեխաներին կարելի է բերել ուսումնական դաշտ և նրանց գիտելիքները ծառայեցնել ուսումնական այս կարևոր խնդրի լուծմանը։

Ուսումնասիրվող նյութի ազդեցությամբ ինքնաճանաչման, ինքնագնահատման հմտությունների խթանում։

Յուրաքանչյուր դասանյութ անցնելիս պետք է կարևորել, տանել այն գիտակցությանը, որ երեխաները այդ նյութի միջոցով տեսնեն իրենք իրենց, արժևորեն իրենց վերաբերմունքը, գնահատեն իրենք ինչպես են անում։

Օրինակ. կարդում ենք որևէ հեքիաթ և իրենք այդ հեքիաթի հերոսներին բնութագրելով, ճանաչելով հանդերձ պետք է փորձեն ինքնաճանաչման, ինքնագնահատման վերլուծական աշխատանքներ կատարել։ Կնմանվե՞ին արդյոք այդ հերոսներին(ինչու՞), չէին նմանվի (ինչու՞)։ Այսինքն ուսուցիչը այնպես պետք է տանի այդ հարցադրումները, որ երեխաները ուսումնասիրվող նյութի մեջ տեսնեն իրենք իրենց և փորձեն կատարել ճիշտ եզրահանգումներ։

- Նշանավոր մարդկանց օրինակով ինքնադաստիարակման կարողությունների խթանում։

Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր ուսուցիչ որևէ հայտնի մարդու մասին խոսելիս(գրող, ազգային հերոս), անպայման որևէ հետաքրքիր դրվագ, կենսագրական տեղեկություն հաղորդի այդ նշանավոր մարդու մասին, որը շատ ավելի է տպավորվելու երեխաների մոտ և տարիներ անց շատ լավ, հրաշալիորեն հիշելու են հենց այդ օրինակը։

Ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձևավորում։

Ցավոք մեր երեխաները տեսականը գործնականի վերածելու հարցում ունենում են խնդիրներ։ Այստեղ նույնպես շատ կարևոր է ուսուցչի դերը, որպեսզի տեսական գիտելիքները հնարավորության դեպքում դառնան գործնական։ Կարելի է հաճախակի գործնական աշխատանքներ անել, ապա այս խնդիրը ավելի հեշտ կլուծվի։ Շատ կարևոր է, որ երեխաները չմնան իրենց տեսական գիտելիքների շրջանակներում։ Որ այդ տեսական գիտելիքները կյանքի կոչվեն և գործնականում կիրառվեն։

Քո ուսուցիչը նա չէ, ով քեզ սովորեցնում է, այլ նա, ումից դու ինքդ ես սովորում։

-Ռիչարդ Բախ

Աշակերտները շատ դեպքերում փորձում են նմանվել իրենց ուսուցիչներին։

Մատաղ սերնդի կրթությանը և դաստիարակությանը նվիրվող գործիչը պետք է օժտված լինի մի շարք բարեմասնություններով, ինչպիսիք են՝ կենսուրախություն, համբերատարություն, ամուր կամք, գործելու եռանդ, նախ և առաջ՝ ներհուն միտք, որ կարողանա <<միտք ու կամք շինել>>։ Կարելի է սկսել մուտքից։ Որքան հաջողված է դասի մուտքը, այքան հաջողված է ընթացքը և այնքան տեսանելի են նպատակները; Անկախ նրանից ինչպիսի տրամադրություն ունենք, դասարան մտնելիս պետք է մտնել բարձր տրամադրությամբ և սիրալիր, ջերմ ողջունել մեր աշակերտներին։ Որովհետև յուրաքանչյուր անգամ մենք պետք է մտածենք, որ մենք նոր աշխարհ ենք մտնում, նոր աշխարհ ենք բացահայտելու նրանցից յուրաքանչյուրի մեջ։ Պետք է սովորեցնել այդ բարևի մշակույթը։ Պետք է ճիշտ բարևել, սիրալիր բարևել, օրը սկսել բարևով։ Այս ամենին ուսուցիչը պետք է հասնի նախ և առաջ իր անձնական օրինակով։ Սա շատ կարևոր է։

- Կհասկանան, որ հանդիպումը շատ սպասված է։
- Կսովորեն, որ միմյանց պետք է դիմավորել սիրալիր։

Նախքան դասին անցնելը համոզվել, որ բոլոր աշակերտներն են ներկա։

- Կհասկանան, որ յուրաքանչյուր աշակերտ կարևոր է ուսուցչի համար։
- Կսովորեն նկատել միմյանց, կարևորել յուրաքանչյուրի ներկայությունը։

Յուրաքանչյուր աշակերտի ներկայությունը կարևորել։

Նախքան դասին անցնելը շատ կարևորում եմ ուշադրություն դարձնել դասասենյակի հիգիենիկ վիճակին։ Հաճախակի օդափոխում եմ դասասենյակը, որովհետև երեխաներին անհրաժեշտ է այդ մաքուր օդը։

- Կհասկանան, որ հիգիենիկ նորմերի պահպանումը կարևոր է։
- Կսովորեն մաքուր պահել շրջապատը։

Երեխաների մեջ պետք է ձևավորել մշակույթ՝ կոկիկ պահել շրջապատը ։

Շատ կարևոր է, որ ուսուցիչը ճիշտ հետևի ժամանակին, միշտ տնօրինի ժամանկը, որովհետև 45 րոպեն պետք է ճիշտ բաշխել, յուրաքանչյուր մասի համար հստակ ժամկետներ սահմանել։

Շատ կարևոր է, որ ուսուցիչը ճիշտ ժամանակին մտնի դասարան.

- Կսովորեն լինել ճշտապահ։
- Գնահատել աշակերտներին ըստ իրենց կարողությունների։

Ոչ բոլոր երեխաներն են, որ ունեն նույն կարողությունները, ունեն հավասար ընդունակություններ և երեխայից պետք է պահանջել այն, ինչին ինքը ընդունակ է։ Հակառակ դեպքում մենք շատ մեծ սխալ թույլ կտանք և կխաթարենք այդ երեխայի հոգեվիճակը։Երեխան պետք է զգա, որ դպրոցն ու դասարանը բարեկամական կոլեկտիվ են՝ երկրորդ հարազատ օջախը իր կյանքում; ՈՒսուցիչը պետք է կարողանա թափանցել յուրաքանչյուր սանի ներաշխարհը, ճիշտ հասկանալ ու սիրել իր սաներին։

Բոլորն են հանճար, բայց եթե դու դատես ձկանը ըստ նրա ծառ բարձրանալու ունակության, նա ողջ կյանքում կմտածի, որ հիմար է։ -Ա. Էյնշտեյն

Երեխաներին պետք է միշտ գնահատել ըստ իրենց կարողությունների, որովհետև յուրաքանչյուրը հանճար է յուրովի։

Հնարավորություն տալ մտածելու, վերլուծելու, արտահայտելու սեփական կարծիքը։

Եթե տվյալ աշակերտը չի կարողանում բանաստեղծությունը անգիր սովորել, թող նա լավ կարդա։ Կարող է շատ լավ կարդա՝ գեղեցիկ, առոգանությամբ, դերային խաղով։ Եթե իր մոտ լավ է ստացվում կարդալը, թող կարդա։

Այս դեպքում երեխաները սովորում են վստահել սեփական ուժերին: Կարևորել յուրաքանչյուրի անհատական կարծիքը, անգամ եթե այդ կարծիքի հետ մենք համաձայն չենք: Պետք է լսել, որպեսզի երեխաների մոտ զարգանա սեփական կարծիքը, սեփական տեսակետ ունենալու դիրքորոշում:

Գնահատականը հիմնավորել ցանկացած դեպքում:

Երբ մենք գնահատում ենք աշակերտին առանց հիմնավորելու, երեխայի մոտ հարց է առաջանում, թե ինչու ինքը ավելի ցածր ստացավ: Պարտադիր պետք է ցանկացած դեպքում գնահատել, ապա հիմնավորել այդ գնահատականը: Այս դեպքում երեխաները՝ երբ հիմնավորված ենք ներկայացնում իրենց գնահատականը, այլևս կասկածի տեղիք չեն տալիս և նրանք հասկանում են, որ այդ գնահատականը իրենց վաստակած գնահատականն է: Սովորում են իրենք էլ հիմնավորել իրենց քայլը:

Բացատրել աշակերտին, որ <<վատ աշակերտ>> բոլորովին էլ չի նշանակում <<վատ մարդ>>:

Շատ հաճախ թույլ կարողությունների տեր երեխաները 1-2 սխալ պատասխան հնչեցնելուց հետո խուսափում են, ակտիվություն չեն դրսևորում և նրանց մոտ ձևավորվում է թերարժեքության զգացողությունը: Լսելով սխալ պատասխանը, այս դեպքում երեխային պետք է ասել. <<այսօր դու սխալ պատասխանեցիր, բայց խնդրում եմ նորից վերանայիր դասանյութը և հաջորդ դասին դու կկարողանաս ճիշտ պատասխանել>>: Այս դեպքում սովորողը հասկանում է, որ բոլոր աշակերտները ուսուցչի համար կարևոր են նախ և առաջ իրենց մարդկային հատկանիշներով, ապա հետո միայն գիտելիքներով և կսովորեն, որ նախ պետք է լավ մարդ լինել, ապա նաև լավ աշակերտ: Հաճախակի ոգևորել աշակերտներին: Շատ կարևոր է, որ մենք նկատենք երեխաների ամենափոքրիկ հաջողությունները, որը գուցե նկատելի չէ, բայց երեխայի համար այն շատ կարևոր է:

Ուսուցիչը պետք է նկատի, ոգևորի, որովհետև սա թևեր է տալու երեխային։ Եվ երեխաները պետք է հասկանան, որ ուսուցչի համար շատ կարևոր է իրենց անգամ ամենափոքրիկ հաջողությունը։ Նրանք կսովորեն փոքրիկ հաջողություններով առաջ շարժվել և հասնել մեծ հաջողությունների։Ուսուցչի վարած դասերի ընթացքում հայրենասիրության թեման մեծ հետաքրքրություն պիտի առաջացնի աշակերտների շրջանում։ Դեռահասների շրջանում, հատկապես տղաների, նկատվում է գաղափարական նոր փոփոխություններ, նոր մտածելակերպ, նոր մոտեցումներ։ Մեր նպատակն է հավատարիմ մնալ մեր արժեհամակարգին։ Այդ պատճառով ուսուցչի դերը աշակերտի կյանքում շատ ավելի մեծ է ու կարևոր։ Աշակերտը վստահում է ուսուցչին ու կարևորում նրա խոսքը։ Այսօր շատերը հայրենասիրական արժեքի դիմաց մեծ գին են վճարել. նրանց մեջ այդ դաստիարակությունը սերմանել է նաև ուսուցիչը։ Արժեհամակարգը թերի է առանց այդ կարևոր հատկանիշի։Աշակերտը մեծ ուշադրությամբ է հետևում այն թեմաներին, որոնց հետ նա առնչվում է նաև իր կյանքում։ Աշակերտների գեղագիտական և արժեքային համակարգի դաստիարակության ընդհանուր համակարգում մեծ դեր ունի գեղարվեստական կրթությունը։ Նրա նշանավոր անհատի զարգացման ու ձևավորման մեջ բխում է գեղագիտական հարաբերությունների բազմակողմանիությունից՝ կապված մարդու, բնության, արվեստի, ինքն իր հետ ունեցած փոխհարաբերություններից, ինչն ընդգրկում է անհատի գիտակցությունը, արժեքային համակարգի ձևավորման և գործունեության ողջ բնագավառը։ Կերպարվեստի ուսուցումը երեխայի առջև բացում է դեպի արվեստը տանող ճիշտ ճանապարհը՝ նրա համար բացահայտելով այն խնդիրն ու նպատակները, որոնք նա պետք է դնի իր առջև արվեստի հետագա բարձունքներին հասնելու համար։ Կերպարվեստի տարրական գիտելիքները նրանց անպայման օգնում են հասկանալու և գնահատելու գեղեցիկը և ավելի արդյունավետ լինելու իրենց ընտրած գործունեության բնագավառում։

Գեղարվեստական գործունեությունը զգալիորեն ներազդում է անհատի արժեքային համակարգի ձևավորման վրա։ Բնության տարբեր վիճակները նկարելիս դպրոցական առարկայական աշխարհը դիտարկելու և ուսումնասիրելու միջոցով մեծ հետաքրքրություն է հանդես բերում բնության գեղեցկության, գույների և ձևերի, հարստության ու բազմազանության նկատմամբ։ Նա ընկալում է բնության գունային երանգների ռիթմն ու ներդաշնակությունը։ Ակտիվացնելով դպրոցականների գեղարվեստական գործունեությունը՝ մենք միաժամանակ լուծում ենք գեղագիտական դաստիարակության խնդիրները։ Այդ նպատակին հասնելու համար մանկավարժը պետք է լավ տիրապետի դպրոցականների հետ աշխատելու մանկավարժական մեթոդներին, ուսումնական գործընթացի կազմակերպման ու վարման սկզբունքներին ու հնարներին։ <<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով։ Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումնբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման զարգացման համար։ Կերպարվեստը մեծ հնարավորություններ ունի գեղագիտական դաստիարակության գործում։ Աշխարհի ճանաչողությունը կերպարվեստի օգնությամբ, թույլ է տալիս միջավայրը՝ ընդհանրացնել նաև հայրենի բնության մեջ։ Գեղարվեստական կրթությունը հանրակրթական դպրոցում կոչված է լուծելու սովորողների աշխատանքային և գեղագիտական դաստիարակության, ճաշակի զարգացման, բնության, պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գիտակցության ձևավորման, ինչպես նաև հոգևոր և բարոյական մի շարք խնդիրներ։ Ելնելով դաստիարակության ընդհանուր խնդիրներից՝ հանրակրթական դպրոցում կերպարվեստի դասավանդման հիմնական նպատակներն են. օգնել երեխաներին ճանաչելու շրջապատող աշխարհը, զարգացնել նրանց դիտողականությունը, ձևավորել տրամաբանական մտածողություն, ինչպես նաև տեսածի նկատմամբ գիտակցական վերաբերմունք։

Բացահայտել մարդկանց կյանքում ստեղծագործական աշխատանքի նշանակությունը։ Տալ աշխարհի գեղագիտական ընկալման ճիշտ կողմնորոշում։ Զարգացնել տարածական մտածողություն, պատկերային երևակայություն։ Աշակերտներին ծանոթացնել ազգային մշակույթի ստեղծագործություններին։ Գեղարվեստական ստեղծագործության նկատմամբ սերմանել հետաքրքրություն և սեր։ Կերպարվեստն օգնում է երեխաներին տեսնելու աշխարհը ավելի ընդարձակ և բազմակողմանի։ Առարկայի դասավանդումը լուծում է երկու փոխկապակցված խնդիր՝ տեսողական ընդունակության զարգացումը, տեսածի նկատմամբ գիտակցական վերաբերմունքը։ Տեսողական ընդունակությունը աշակերտի կողմից ուշադիր դիտելու կարողությունն է՝ համեմատելով առարկաներն ու երևույթները, բացահայտելով նմանություններն ու տարբերությունները, առարկաների նյութի ու ձևի դասակարգումը։ Կերպարվեստի դերը շատ կարևոր է հատկապես մանկական տարիքում, երբ երեխան նոր է սկսում հասկանալ և գիտակցել իրեն շրջապատող իրականությունը։ Իր յուրահատկության և և բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ, <<Կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը։ Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը նպաստում է՝ անձի ինքնաճանաչմանը, ինքնարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը, սովորողների գեղագիտական և բարոյական դաստիարակությանը, ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը։ Գեղագիտական դաստիարակության էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ է նշանակում գեղեցիկը՝ որպես գեղագիտական զգացմունքների և ապրումների աղբյուր։ Գեղագիտական դաստիարակությունն օգնում է ճիշտ ըմբռնել կյանքի իմաստը։

Գեղագիտական ընդունակությունների զարգացումը և գեղագիտական պահանջմունքների բավարարումը կապված են մարդու մեջ մարդկային որակների զարգացման հետ։ Գեղագիտական դաստիարակությունը ծառայում է սովորողների բարոյական գծերի ձևավորմանը, զարգացնում է նրանց գեղագիտական ընդունակությունը, օգնում է՝ ուժերը ներածի չափով ներդնելու արվեստում, աշխատանքում, գեղեցիկը ստեղծելուն, գեղեցիկի օրենքներով ստեղծագործելուն։ Սովորողների արժեհամակարգի ձևավորումը իրականանում է դպրոցում՝ յուրաքանչյուր ուսումնական առարկայի ուսումնասիրման ժամանակ։ <<Տեխնոլոգիայի>> դասերն աշակերտները պիտի ճանաչեն, մտածեն, և ոչ թե <<ձեռքը վարժեցնելով>>՝ հնարներ յուրացնեն կամ պարզապես շինվածք պատրաստեն։ Այդ դասերի գլխավոր նպատակը երեխաների մեջ ոչ միայն աշխատասիրության դաստիարակումն է այլ մարդու մեջ ձևավորել այնպիսի անհատական որակների առկայություն, ինչպիսիք են կամքը, կազմակերպվածությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում։ Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում։ Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային-բարոյական ընդհանրականության հիմքի վրա։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առարկայական չափորոշիչներ

2. Հանրակրթության պետական չափորոշիչ

3. Մանասյան Ն. Հանրակրթության արժեքային համակարգը, Մանկավարժություն գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.

4. Սուխոմլինսկի Վ. Ա. Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.

5. Յ. Ամիրջանյան, Ա. Սահակյան Մանկավարժության ձեռնարկ

6. Զախարովա Լ. Ի. Ընտանիքի և ընտանեկան արժեքների մասին

7. Կալյուժնի Ա. Ա. Ուսուցչի դերը դպրոցականների բարոյական դաստիարակության գործում

8. Մակարենկո Ա. Ս. Ընտանեկան դաստիարակության մասին/ Մոսկվա 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ …….3

2.ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ ……..3

3.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ ……...8

4.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……21

5.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……22